ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան 10 դեկտեմբերի 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 038928-1

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԱՌԿԱ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԱՍԻՆ

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկադիր գանձումների բաժնի գլխավոր մասնագետ Վ.Ավետիսյանս, մասնակցությամբ նույն բաժնի 1-ին կարգի մասնագետ Հ.Հակոբյանի, համաձայն ՀՀ ՊԵԿ նախագահի 04.12.2018թ. թիվ ԱՀ 038928 հանձնարարագրի և ուսումնասիրելով հարկ վճարողի հարկային գործը, 08.11.2018թ. թիվ 4189/05-Ա վարչական վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների <ՀՀ ԱՌԱՏՐԻ ԿՈՄԵՐՑԻԱՅԻ և ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱԼԱՏ ԵՏՇԽ> ԱՍ-ի (ՀՎՀՀ՝ 01005347, պետ. գրանցման համարը՝ 211.060035591, հասցե՝ ք.Երևան, Դ.Անհաղթի փող., 10) վերաբերյալ պետ. բյուջեի հանդեպ 08.11.2018թ. թիվ 4189/05-Ա վարչական վարույթի շրջանակներում ունեցած հարկային պարտավորությունը կազմել է 3.277.894 դրամ /ապառք՝ 2.053.066 դրամ, տույժ՝ 1.199.265 դրամ/:

10.12.2018թ-ի դրությամբ 08.11.2018թ. թիվ 4189/05-Ա վարչական վարույթի շրջանակներում չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 3.277.894 դրամ:

ՀՀ հարկային օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն <ՀՀ ԱՌԱՏՐԻ ԿՈՄԵՐՑԻԱՅԻ և ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱԼԱՏ ԵՏՇԽ> ԱՍ-ի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների բացակայության հետևանքով ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով անհրաժեշտ է արգելանք կիրառել դրամակղում առկա կանխիկ դրամական միջոցների վրա:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 429-րդ 430-րդ և 431-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Արգելանք դնել <ՀՀ ԱՌԱՏՐԻ ԿՈՄԵՐՑԻԱՅԻ և ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱԼԱՏ ԵՏՇԽ> ԱՍ-ի (ՀՎՀՀ՝ 01005347) դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցների վրա 3.277.894 դրամի չափով:

2. Նրան արգելել տնօրինել, տիրապետել, օգտագործել արգելադրված գումարը:

3. Որոշման պատճենը ոչ ուշ, քան այն ընդունելու հաջորդ օրը, պատշաճ ձևով ուղարկել <ՀՀ ԱՌԱՏՐԻ ԿՈՄԵՐՑԻԱՅԻ և ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱԼԱՏ ԵՏՇԽ> ԱՍ-ին:

4.Արգելանք դնելու մասին որոշումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5.Սույն որոշումը կարող է բողոքարկվել հարկային մարմին կամ ՀՀ վարչական դատարան: Որոշման արտադատական կարգով բողոքարկումը, համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 432-րդ հոդվածի 5-րդ մասի, չի կասեցնում որոշման կատարումը:

Սույն որոշումը ստանալու պահից Դուք նախազգուշացված եք արգելադրված գումարը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին:

Վ.Ավետիսյան _____ Հ.Հակոբյան _____

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ * ԳՏԿՈՄԻՏ